1976, թիւ 2, էջ 57-74) փորձել է փաստարկել, որ Սահակ Պարթեւի նամակը կարող է թուագրուել 432-ով, սակայն նրանում բերուած է Հայոց թագաւոր Խոսրով Դ-ի եւ Շապուհ Գ Սասանեանի (383-388) օրօք 388 թ. հաստատուած «Գահնամակ»-ը։

Բոլոր դէպքերում ուսումնասիրողներն ընկալել են բնագրի սկիզբն այնպէս, թէ հայ նախարարների գահացուցակը Սահակ կաթողիկոսը (387-439) յայտնաբերել է Հայոց թագաւորի դիւանում (վերջին Արտաշէս-Արտաշիրի կամ Խոսրով Դ-ի) կատարած փնտրտուքի («խնդիր արարեալ») արդիւնքում, որից յետոյ այն ուղարկուել է Տիզբոն՝ արքայից արքայ Վռամ Ե Գուրին (420-438)։ Սակայն բնագրի ուշադիր վերլուծութիւնը, ճիշտ տողատումն ու կէտադրումը աւելի հաւանական են դարձնում նրա ընթերցման այլ տարբերակ։ Թւում է, թէ ուսումնասիրողներին պարզապէս կաշկանդել է բնագրի ամենասկզբի պակասի տեղում դեռ մէկուկէս դար առաջ Գ. Ախվերդեանի եւ Մ. Էմինի առաջարկած վերականգնումը՝ «[Իմ՝ Սա]հակայ խնդիր արարեալ…»։ Իրականում շատ աւելի հաւանական է, որ կորսուել է լոկ Ա սկզբնատառը՝ «[Ա]հա կայ խնդիր արարեալ» արտայայտութեան մէջ (բաղկացած՝ «ահա» եղանակաւորիչից եւ «կամ» բայից՝ գործածուած որպէս օժանդակ բայ «առնեմ» բայի անցեալ դերբայի հետ. տե՛ս Վ. Առաքելեան, 2010, էջ 194, 220), եւ փաստօրէն՝ բնագրի առաջին նախադասութեան գործող անձը եղել է ոչ թէ կաթողիկոսը, այլ հէնց Հայոց «Արտաշէս թագաւոր»-ը («[Ա]հա կայ խնդիր արարեալ... յԱրտաշէսի թագաւորի»)։ Դրանից յետոյ պարզ է դառնում, որ «խնդիր արարեալ»-ն այստեղ ունի ոչ թէ «փնտրել», այլ աւելի ուղիղ՝ «հարցնել, հարցում կատարել» իմաստը (ըստ այդմ՝ յաջորդող «եթէ»-ն պահանջուող հարցական է դառնում), իսկ «զոր ի Տիսպոնն» հատուածն անհրաժեշտ է ընկալել իբրեւ «ի դրան արքունի» բառերին լրացնող («կայ խնդիր արարեալ յԱրտաշէսի թագաւորի՝ ի դրան արքունի, զոր ի Տիսպոնն, … եթէ՞ ես…»)։ Նաեւ պարզ է դառնում, որ «Արտաշրի ի դիւանին»՝ ըստ ամենայնի, նշանակել է «Արտաշրական դիւան»՝ իբրեւ անուանում Իրանի պետական արխիւ-դիւանի (առաջին Սասանեան արքայի անունով), եւ որ Սահակից ակնկալել են հէնց Տիզբոնի այդ դիւանում փնտրել ու գտնել («եթէ՞ ես … տեսի») անհրաժեշտ փաստաթուղթը։ Այն, բարեբախտաբար, յայտնաբերուել, ապա հաստատուել է կաթողիկոսի ու արքայից արքայի կնիքներով եւ ուղարկուել Հայաստան՝ Քաղոց ամսի 17 թուակիր մի նամակով, այն մասին, թէ թագաւորը («Ձեր բարերարութիւնդ») ինչպէս կարգադրի («հրաման տացէ») «Հայոց ազատաց եւ տանուտէրանց» տեղակարգութեան խնդիրները։ Եւ դա՝ ի պատասխան Արտաշէսի՝ անշուշտ, Սահակի հետ նախապէս մտայղացուած ու պատրաստուած պաշտօնական հարցումի։